

COUTAN: REVUE D'AGRICULTURE, SCIENCES ET ARTS
(SOUS LE PATRONAGE DE M. E. DUCLAUX)

ԳՈՒԹԱՆ

ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ


Հ Ա Ն Գ Է Ս

F. ՏԱՐԻ

ԹԻԹ

1902

ՓԱՐԻՋ



Արի՛. գալժան, վա՛րի գաւթան,
որն սկիւ է ճաշ գաւել,
Աւր շուռ տուր, կոփիտ զուրբաւ
Սրճեալ է Աստուած հորովէ՛լ:
Բաշխր էգօ, աւիտ ճարտար,
Բաշխր, բաշխր - վար աննջ
Ճպտին արա՛, ըշխր հօտար,
Ե՛ր սեւ օրին ճար աննջ:

ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆՈ

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ

ԳԱՐԵԳԻՆ ՍԵՄԱՏՈՒՐԵԱՆ

Secrétaire: PAUL GÉRÉE

Directeur: K. MÉZADOURIAN,

Rédaction: 23, Rue de la Collégiale, PARIS (5^e)



Վ. ՎԵՐՄՕՐԷԼ

Վիլլեֆրանշ (Րոն) Ֆրանսա

1900ի Ցուցահանդեսին Երկու մեծ մրցանակ

Էֆֆեկտի Թիւ 1 ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼ

ՄԵՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՇՈՂ



ՊԱՐԳՈՒԹԻՒՆ, ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆ

Մ Ղ Ե Ղ Ա Կ Ն Ե Ր

Ուղեցէք տեղեկութիւն

Կարկուտի դէմ ԿԱՐԿՈՒՏԱՐԳԵԼՆԵՐ

Էֆֆեկտի վայրկենական Պույին Միլտիուէի եւ

Պլաքրոզի դէմ:

Երաշխաւորութիւն ազդեցութեան, դիւրաւ գործածուելուն եւ խնայողութեան. 12 լիւարի համար մէկ ծրարը 1 ֆր. 75 : 24 ծրարը 42 ֆր.

Գրեւ

V. VERMOREL

Villefranche (Rhône)

France

Ազգերու անկարիտ հարսուրեան
աղբիւրը երկրագործութիւնն է :

ՊՈՍԻԷ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Վերջին կէս դարու մէջ , եւրոպական երկիրներ ,
արուեստագիտական կրթութիւնը ստիպողական ընկելով
մտցուցին իրենց վարժարաններու մէջ . գիտութիւնն ու
աշխատութիւնը հաշտեցուցին իրարու հետ եւ նոր սե-
րունդը զարգացուցին գործնական խելքով եւ բնաւրու-
թեամբ :

Արուեստագիտական կրթութիւնը՝ չէ թէ պատահական
կամ մտացածին , այլ հասարակութեան բարքերու , բրու-
թեան , եւ պէտքերու մէկ պահանջն էր , որ պէտք էր օգ-
նութեան հասնիլ անուս երկրագործ եւ ագէտ բանուոր
դասակարգին :

Ասոնք ալ իրաւունքներ եւ պահանջներ ունին եւ
պէտք է ճանչցուին :

Քաղաքակիրթ երկիրները լսեցին այս անարգուած
դասակարգի ձայնը , հիմնեցին Ժողովրդական վարժարան-
ներ , ուսումը պարտաւորիչ ըրին , տարրական դպրոցնե-
րու հետ հիմնեցին արհեստագիտական վարժարաններ , իսկ
կատարելագործուելու համար ալ՝ քացին մասնագիտակոն
վարժարաններ եւ արուեստագիտական ձեմարաններ , ուր
տղաք երկրագործութեան , ճարտարագիտութեան եւ վա-
ճառականութեան վրայ կրնան ձեռք բերել ընդարձակ եւ
հաստատ տեղեկութիւններ :

Ո՛ւր ենք մենք եւ ի՞նչ կ'ընենք :

Մեր զբախտանման երկիրը կը դարտկի , գիւղացին
քաղաքները կը քաշուի , երկրագործը իր արօրն ու մու-
սուսան մեղքի կը նեղէ Պոլիս կամ Թիֆլիս պանդխտելու ,
երիտասարդութիւնը եւ արուեստաւորը իրենց խելքն ու
ուժը եւրոպական երկիրներու կամ Ամերիկայի գործարան-

ներուն կը վաճառեն , եւ այս ընկերական շարիքներու մեծագոյն պատճառը , որովհետեւ՝ մենք մեր զպրոցներուն մէջ չենք մոցուցած զեռ արուեստագիտական կըրթութիւնը :

Բացատրենք .

Մեր բոլոր վարժարաններու մէջ աւանդուած ուսումները , չեն համապատասխաներ մեր հասարակութեան արգի պահանջներուն :

Ս. Մ. աը ժիրարաէն , որ արուեստագիտական կըրթութեան մեծ եւ եռանդուն պաշտպանն է , պերճօրէն կը խօսի՝ «երբ իրերու ընթացքը նոր հասարակութիւն մը կը կազմակերպէ՝ իսկոյն նոր սեսակ կըրթութեան պահանջ կը զգացուի , կըրթութեան եղանակը միշտ հասարակութեան բնաւորութեան կը համապատասխանէ» : Այսպէս , եթէ հասարակութիւնը կըրօնասէր է , կը պահանջէ աստուածաբանական կըրթութիւն : Ժերդ դարու Փրանսական ժողովուրդը աշխարհասէր եւ ազատամիտ կը գառնայ . 1789ը կը կազմակերպէ նոր հասարակութիւն մը երկրագործական , առևտրական եւ ճարտարագիտական սկզբունքներու վրայ , որ իրեն համապատասխան կըրթութիւն կը պահանջէ : Իսկ մեր ժամանակակից կըրթութեան եղանակը ողողուած է աւելորդ մասնագիտութիւններով եւ միակողմանիութիւններով , որ կընայ բանասէրներ եւ բրօֆէսօրներ պատրաստել , մինչդեռ ամեն կողմէ կը պահանջեն վաճառականներ , արուեստաւորներ , երկրագործներ : Լոյսի պէս պարզ է , որ մեր կըրթութեան եղանակը չի կընար պահպանել այս պահանջները :

Մեր ազգի նիւթական վիճակը չի ներկեր առանձին արուեստագիտական հաստատութիւններու պէտքերը գոհացընել , բայց կընայ քիչ զո՞ղութեամբ՝ գասական ուսմանց հեռ արուեստագիտական դասընթացքներ հաստատել :

Ստուար մեծամասնութիւն մը հայ հայրերու կ'ըսեն . «Մեր տղաքը ի՞նչ պիտի ընեն շատ կարգալը . ո՛չ տէրտէր ո՛չ ալ վարժապետ պիտի ըլլան . բանաստեղծութիւնն ու բանասիրութիւնը աղւոր բաներ են , բայց փոր չեն կշտացներ եւ հարուստին համար են . բժիշկ ու փաստաբան ալ չպիտի ըլլան , անոնք ալ շատցան եւ չեն կընար իրենց հացը ճարել . մենք կ'ուզենք , որ մեր զաւակները լաւ երկրագործներ , աղէկ արուեստաւորներ եւ ճարպիկ վա-

ճառակիաններ ըլլան . ի՞նչ բանի կը ծառայեն մեռեալ լիզուներու՝ գրաբարի, հելլեներէնի եւ լատիներէնի ուսուցումը մեր դպրոցներու մէջ, չէ՞ մի որ ետքը ետքը պիտի մուցուին: Մեր դպրոցներէն հելլոցները բոլորն ալ գրադէտներ եւ մատենագիրներ չպիտի ըլլան, հազիւ փոքրամասնութիւն մը պիտի ընտրէ իրեն ասպարէզ ուսումները, մեծագոյնը աշխարհային գործերով պիտի զբաղի:

Մեր մատաղ սերունդը վարժարաններէն պէտք եղած բան մը չի ստանար, կատարեալ ոչնչութիւններ եւ պէտք ըլլալիք ո՛չ մէկ բան:

Ընտանիքներու հայրերը իրաւունք չունին միթէ բողոքելու եւ պօռալու . «Ինչո՞ւ կը գողնաք մեր տղոց թանկագին ժամերը, քանի որ դիտէք՝ թէ ժամանակը ոսկի է, իմ տղաս վարժարանէն հելլելէ վերջը արջընով կտաւ պիտի չափէ, փոխանակ թուաբանութիւնը լաւ սորվեցնելու, դուք անոր գրաբառի հատուածներ դոց ընել եւ ուսանաւորի յանգեղ համրել տուեր էք . իմ տղաս վաղը հողը պիտի մշակէ, թէեւ Վերգիլիտի մշակականքը դոց սորվեր է, բայց չգիտեր թէ ինչ է արօրը, չի կրնար զանազանել եզը կո՛ւէն, ցորենը գարիէն»: Ծաղրելի չէ՞ միթէ մեր զատական կրթութիւնը, ասանց արուեստագիտական դաստիարակութեան:

Ժիրարտէն կը գրէ գարձեալ . «Դասակիան կրթութիւնը, բարոյական գրական, ինչպէս է, շաւ է մեկ ֆակիլիս հաւատ, յայց զգուշի է, երբ կը տրուի անհնուն»:

Դասական կրթութիւնը՝ անուբանալի է որ կը պահպանէ մարդկութեան մտաւոր կեանքի թանկագին մասունքները, բայց կը ատարժանի կարծիքով, պէտք չէ անով շատ գրաւուիլ եւ այնպիսի մարդոց վիզը փաթտել, սրտնք վերջը մասնագիտական ուսումներու պէտք պիտի ունենան:

Դասական կրթութիւնը թող մնայ առ այժմ ուր որ է, բայց անոր քով պէտք է դնել մասնագիտական եւ երկուքը զուգընթաց առաջ վարել:

Ա. Գաբրիէլի կ'ըսէ՝ «Պատմութիւնը կ'ապացուցանէ, որ արուեստագիտական կրթութիւնը ժողովուրդի երջանկութեան նշան է: Ժողովուրդը դիտութեան վերջը, մեռելութեանէ յարութիւն կ'առնէ, անվախ կը նստի նաւակը կամ կը ցրուի դաշտերը գանձ փնտնելու . կը քանդէ լեռ-

ները, կը կուռի ալիքներու գէմ, կը յօրինէ շոգեշարժ մեքենան, ելեքտրական հեռագիրը եւ կ'ընդգրկէ ամենա-վատահ ձեռնարկութիւնները: Իտալիան հասարակական ինքնավարութիւն ձեռք բերելէ վերջը ծովազնացութեամբ փառաւորուեցաւ շնորհիւ իր վաճառչան քաղաքներուն, Վենետիկի, Ճէնովայի, Ռիզայի եւ այլնի»:

Փիտութեան ընտրեալները՝ եթէ կը կարծեն, որ արուեստագիտական կրթութիւնը անարժան զբաղում մ'է, չի կրնար ազնուացնել հոգին կամ կազմակերպել բնաւորութիւնը միակողմանի եւ արաստովոր ծայրայեղութեան մէջ կ'ընկնին:

Արուեստագիտութիւնն ալ ունի իր հերոսները, թէեւ չունի տակաւին անոնց գործերը երգող Հոմերոսն ու Վիրգիլիոսը. արգարեւ այս հերոսները սպառազինութիւններով չեն խրոխտար, բայց անոր փոխարէն խաղաղ աշխատանոցներու մէջ՝ լապտերի մը աղօտ լոյսին առջեւ կամ միտին արուեստանոցի մը խորը քաշուած՝ անանկ գիւտեր ըրած են, որոնց շնորհիւ երկրի մակերեւոյթը փոխուեցաւ եւ մարդկութեան առջեւ ծածկուած անհամար գանձերը բացուեցան: Պէրնար, Բալիսի, Ստէֆէնան, Ֆուլտոն, Մօնկօլֆիէ, Իէվի, Օլիվիէ աը Սէր, Բարմանտիէ, Տօմպալ, Բաստէօն եւ ասոնց նման շատեր մէկ մէկ հերոսներ են, որոնք երգուելու համար կըսպասեն իրենց Հոմերոսին եւ Վիրգիլիոսին գալստեանը:

Շատ չանցնիր եւ կուգայ օրը, որ բանաստեղծները եւ գեղարուեստագէտները կ'արձանագրեն այս սեռ մարդոց անմահ գործերը, որոնք իրենց կեանքը զոհած են ո՛չ թէ նուաճումներ կամ ժողովուրդներ շղթայելու, այլ բնութեան տարրերը եւ ուժերը նուաճելու՝ տառապող մարդկութեան օգտին եւ երջանկութեանը համար:

6. — Ճանիճներու կազմելը դիւրացնող եւ յառաջ բերող գոյաւոր պատճառներ . — Ճանիճ խօսքով պէտք է հասկնալ բոլոր այն հոգեբը, որոնք ջրով ծածկւած կամ թաթխւած են, եւ սակայն որոշ ժամանակներու մէջ կարող են ամբողջովին կամ մասնակի կերպով ցամքիլ: Մէկ քանին ծնունդ կ'աւնեն ծովեզերքի կամ վտակներու մօտ գտնուող հողին բնական դարվարութիւններէն, իսկ միւսները մարդկանց ձեռքով կը կազմէին եւ կամ երկրագործական զանազան աշխատութիւններէ կը գոյանան:

Հողին նստիլը եւ ջրերու հոսելուն անբնականութիւնը ճանիճներու կազմելուն անհրաժեշտ պայմաններն են: Ճիշտ է, որ ստորերկրեայ երկրաբանական հանգամանքը ճանիճներու կազմելուն մէջ գեր կը խաղայ, սակայն, ինչպէս Արնօլտ դիտած է, անոնց կազմելուն մէջ մեծ նշանակութիւն մը չունի:

Երկրաբանական բոլոր հանգամանքներու մէջ ճանիճներու գտնելը հաստատելու համար, երկու աշխարհներու ճանիճներուն երկար շարքը աչքէ անցնել բաւական է: Զրերու մրուրներէ եւ սիկէ կազմւած կոյտերը իրենց մէջ ամեն տեսակ ժայռեր կը պարունակեն: Սակայն եւ այնպէս ճանիճներու կազմելուն ուրիշ պատճառներէ աւելի կաւային եւ մարնախառն (կաւային եւ կրախառն) հողերը կը նպաստեն, որոնք խաւ մը կազմելով, ջրերուն դէպի երկրի խոր շերտերուն մէջ թափանցումը կ'արգիլեն: Տարածուն եւ տափարակ մեծ ճանիճներու մեծագոյն մասը շատ քիչ խորութիւն ունին, ինչպէս Փրանսայի Շարանթէնֆէրիէօրի ճանիճները. այս միահարթ հողի վրայ վտակներու ողողող ջրերը, հաւաքւած անձրեւաջրերը շատ գանդազօրէն կը շողբանան եւ այս կերպով կը կազմեն ճանիճը:

Անշուշտ մեր ծրագրէն դուրս ելած պիտի բլլանք եթէ հոս միառմի թւենք Տաճկաստանի եւ Եւրոպիոյ գլխաւոր ճանճուտ վայրերը: Սակայն ճանճաւորութեան այս խնդիրը այնքան շատ կարեւոր եւ գիւղական հասարակութեան կազմութեան ձգտումներուն մէջ այնքան դերակշիռ գեր մը

կը խաղայ, որ կ'ստիպուինք համառօտակի աչքէ անցնել զլիսա.որ ճահիճներու կազմութեան պարագաները:

Ծովեզերքի ճահիճներ. Այս հողերու մեծագոյն մասը ծովափերու երկայնութեանը կը տարածւին:

Ոմանք՝ ծովէն աւազակոյտերով կամ փակոցներով (barrage) անջատուած են, որ բարձրացող ալիքները ծովեզերքին վրայ դիզելով ջրերուն հոսանքին դէմ արգելք մը կը կազմեն, շատերուն մէջ կը յիշենք Թօսքանայի, Կասպօնեայի եւ Հիւսիսային Գերմանիոյ ծովեզերքի ճահիճները:

Մէկ քանիները՝ իրենց կազմութիւնը, ծովաջրերուն նոսրացէս ետ քաշուելով կազմուած հողին իջնելուն կը պարտին, ինչպէս Ֆլանտրիոյ, Հոլանտայի, Շելլեզլիկի եւ Հիւսիսային Փրանսայի ճահիճները:

Ուրիշները՝ ծովի շրջականերու մէջ գեանի զառիթափին անգոյութեան եւ ներսէն հասնող կամ անձրևներէն զոյացող ջրերուն հաւաքման կապուած են, ինչպէս Ռումանիոյ գիւղերուն Մարե Բօնրեկն, Մօրայի Բալիւս, Ֆինլանտայի եւ Ռուսիայի Թանդրաս ճահիճները:

Վերջապէս միւսները՝ դեռաբերաններու ջրատուութիւններուն հողաբարդութեամբ կը կազմւին, ինչպէս Քամարկի, Տօլլուճայի, Էլպայի, Վիսթիւլի, Բօի, Ատիճէի ճահիճները:

Գեսաձորերու ճահիճները. — Այս ճահիճները ձորերու մէջ գեակերու երկայնութեանը կը տարածւին եւ շրջակայ ցած հողերու մէջ վտակներուն յորդումովը կը կազմւին, ինչպէս են սովորաբար մեր գաւառներուն մեծ եւ փոքր ճահիճները, ինչպէս Սպանիոյ եւ Բորթուկալի Marismasը:

Ներքնահողային ճահիճներ. — Ներքնահողային ճահիճները ընդհանրապէս քիչ կամ շատ անցրանցիկ ստորերկրեայ փոսածեւ կամ միահարթ հողին ընդարձակ տարածութեամբ կը կազմւին, գծուարահոս եւ ցածեզր աւաակներով ընդհատ կամ ջրակոյտերով եւ ջրակայքերով սփռուած, ինչպէս Հունգարիոյ pugasը:

Ճահիճներ ալ կան, որ բոլորովին ճշմարիտ գուրփահանքերով կազմուած են, ինչպէս Հանօլըի 1,400 քառ. քիլոմէթր տարածութիւն ունեցող Bourtangere, Անգլիոյ Massesերը, Իռլանտայի bogերը եւ Պօնէմիոյ filzesերը:

Երկրագունդը ընդարձակօրէն ծածկուած է ճահիճներով

և կարելի է ըսել, որ բոլոր երկիրներու մէջ անոնց կը պատահինք :

Ասիոյ մէջ՝ Ինգոսի գետաբերանները ընդարձակ ճաշ հիճ մը կը կազմեն, Գանգէսի գաշտը և Պէնկալի չրջապայքը, Քոչինչինը իր բրնձուտներով և հողի երեսին հաւասար վտակներով, Չինը իր ծովափներու վրայ :

Ճէզայիրը, սարահարթներու վրայ, իր օձապտոյտ գետերու ողողումներով :

Եգիպտոսը և իր ողողած գաշտը, Սէնէկալը և Ափրիկէի արեւմտեան ծովափերը :

Ովկիանոսի մէջ, ասիական մեծ կղզիներու գետերուն բերանները :

Մեր գաւառներուն մէջ ճահճուտ տեղեր չառ կը գրանուին, աւելորդ է ըսել թէ զանոնք անհատական և հաւաքական ջանքերով ոչնչացնել և բարեփոխելը անհրաժեշտ պէտք մըն է, այս կը պահանջէ, գիւղացիներուն և երկրին շահը : Բարեբաղդաբար այս ճշմարտութիւնը տեղ տեղ մուտ գտնելով, մաքրելու աշխատութիւններով սկսած են զանոնք բարեբեր հողերու կերպարանափոխել :

Տօք. 4. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

ՅԵՐԱՍԻ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

II

Բեպրին կառ Քօրթուսիւղ

Քօրթուսիւղի հիւանդութեան ժամանակ, երեւոյթները կանոնաւոր կերպով իրարու չեն յաջորդեր : Շերամները փոխանակ նորմալ ժամանակներու պէս հաւասար կերպով և կանոնաւորաբար մեծնալու, քնանալու և հասալէ հասակ անցնելու՝ կամաց կամաց կ'անհաւասարին, կը փոքրնան, քիչ կ'ուտեն, նորմալօրէն չեն ա-

ճիւղ : մի քանի օր վերջը իրենց մարմնոյն վրայ կ'երեւին խայթուածի կամ այրուածի նման փոքրիկ բիծեր , մարմնոյն կակուղ մասերը կը ծածկուին սեւ բիծերով . ուշ կը քնանան եւ իրենց ամէնէն կատարեալ վայրկեաններուն հասած ատենին անհամար զոհեր կուտան . փոխանակ շատնալու եւ իրար սեղմելու ընդհակառակը կ'անօտրանան (սեյրիկ) , կը պակսին : Ամենէն ուժեղ շերամները թէեւ կը յաջողին երբեմն իրենց բոժոժը հիւսելու , բայց անոնցմէ առնուած արգիւնքը յաճախ ոչինչ է :

Խնամածու շերտմապահին բոլոր ջանքերը անկարող կ'ըլլան այս պատուհաս հիւանդութեան առաջքը առնել եւ շերամները կորուստէ ազատել :

Առողջապահական պայմաններու համաձայն շինուած շերտատուններու կամ խնամով պահուած շերամներու մէջ հիւանդութիւնը շատ դանդաղօրէն կը յառաջանայ , այս պատճառով շատերը կը կարծեն , որ քեպրիկը մորթային հիւանդութիւն մ'է :

Երբեմն , որովհետեւ հիւանդութիւնը իր սնական արագութեամբ կը ընթանայ՝ ոմանք այ այս պատճառով փոխանցուող կը համարին :

Լուրջ ուսումնասիրութիւնները ցոյց տուած են , որ բէպրիկը ո՛չ մորթային եւ ո՛չ ալ փոխանցուող հիւանդութիւն մ'է :

Դիպուածով՝ ճերմակ եւ դեղին բոժոժներու՝ երկու տարբեր տեսակի շերամկիթերը իրարու խառնուած են , ժամանակին արթնցուած եւ սնուցուած են . շերտմապահութեան միջոցին ճերմակները գրեթէ բոլորն ալ մեռեր են ; իսկ դեղինները ամենագեղեցիկ բոժոժներ հիւսած եւ շատ գոհացուցիչ արգիւնք տուած են :

Այս դէպքէն կը հետեւի՝ առաջին , որ ճերմակ շերամները ծնող ձուերը հիւանդ եղած են , մինչդեռ դեղինները առողջ շերամկիթերէ դուրս ելած են :

Երկրորդ՝ հիւանդները չեն վարակած առողջները , հետեւաբար հիւանդութիւնը տարափոխիկ կամ փոխանցող չէ :

Քաղբրճաթ հարցը խնամով ուսումնասիրելէ վերջը , շերամի մորթին վրայ ցանուած պղպեղի հատիկներու նըման բիծերուն պատճառով հիւանդութեան քեպրիկ անունը տուած է , կարծելով միանգամայն , որ յաջողած է հիւան-

դուրբիւնը յատկանիչել, մինչդեռ միւս կողմէն փորձառու-
թիւնը տարբեր բաներ ցոյց կուտայ. կարելի է որ շե-
րամբ մորթին վրայ բիծեր ունենայ, առանց հիւանդ
ըլլալու կամ հակառակը մաքուր, անբիծ ըլլայ եւ հի-
ւանդոտ շերամկիթեր տայ:

Լոպէր եւ Ֆէրրի հաստատած են որ, բոլոր շերամի
թիթեռներու ներքին դործարաններուն մէջ մասնաւոր
պատասարոյծ մը կը գտնուի, որ միայն մանրագէտով կը
տեսնուի:

Պատասարոյծը կազմուած է փոքրիկ ձուածեւ բջիջներէ
(cellule), որոնք աւելի փայլուն են քան հեղուկը՝ որուն
մէջ կը գտնուին. ասոնք մանրադետի տակ գնդակաձեւ
կ'երեւին:

Առաջին անգամ կէռէն Մէնվիլ գիտած է քորբիւս-
քիւլները, բայց անոնց կարեւորութիւնը Քօրնալիուս
հաստատած է:

Ուրիշ գիտնական մը Ֆիլիբբի, թէև կը կարծէ որ
բոլոր թիթեռներու մարմնոյն մէջ, առանց բացառութեան
միշտ քորբիւսքիւլներ կը գտնուին, բայց իրական յա-
ռաջդիմութիւնը այն օրէն կը սկսի, երբ Օզիսօ առաջին
անգամ, նոյն իսկ շերամկիթին մէջ քորբիւսքիւլներ կը
գտնէ եւ Վիտազինի առաջին անգամ կը հաստատէ; որ
քանի գարնան տաքերը մօտենան, շերամկիթներու մէջ
գտնուած քորբիւսքիւլներու թիւը այնքան կը շատնայ.
հիմնուելով այս ծանօթութիւններուն վրայ, Վիտազինի
յաջողութեամբ կրնայ որոշել եւ զատել առողջէն հիւան-
դոտ շերամկիթը:

Տարակոյս չի կայ, որ հիւանդութեան բուն պատճառը
քորբիւսքիւլներն են. եթէ շերամկիթերու մէջ այս միք-
րօպներէն գտնուին, անոնցմէ ելած շերամները երբեք չեն
կրնար իրենց բոժոժը հիւսել:

Վիտազինիի տեսութիւնները որովհետև ապացուցուած
չէին, մարդիկ չէին վստահեր:

Հարցը այսպէս անորոշ, եկաւ հասաւ մինչև Բաս-
դէօն, որ զայն ապացոյցներով հաստատեց:

(Շարունակելի)

Գ. Մ.

Հ Ա Ռ Ա Ք Ո Ւ Մ Ա Կ Ա Ն

Թխտուելիք ձուերը

Թուշուները իրենց ձուերու առաջին շարքը անելէ
եաքը, կը նստին անոնց վրայ մայր ըլլալու համար:

Թուխտերը վազահաս են, երբ առաջին անգամ կը
թխտեն. աղէկ մայրեր են երկրորդ տարուան թխտողները,
որոնք հանգարտած եւ խելոքցած են անցած տարուան մէջ
վասակած փորձառութիւնով. ասոնց ներքեւ պէտք է գնել
լաւ ածողներէ առնուած ձուերը, ինչպէս այն հաւերունը,
որոնք խոշոր, ծանր են եւ կուրծքերնին զարգացած:

Արտադրողներու կուրծքը եւ կոնքը որչափ զարգացած
ըլլայ, այնքան անոնց գլխաւոր գործարանները իրենց
պաշտօնը լաւ կը կատարեն եւ անոնց հանած ձագերը ա-
ռոյգ կ'ըլլան:

Հաւարուծութեան յաջողութիւնը կախում ունի ար-
տադրողներու աղէկ ընտրութենէն, կատարեալ առողջու-
թենէն եւ թխտուելու յատկացուած հաւկիթներու ընտ-
րութենէն:

Պէտք եղած յասկութիւնները չունեցող հաւերու հաւ-
կիթները թխտել տալը անօգուտ է, որովհետեւ ելած ձա-
գերը դժուար կը մեծնան եւ հազիւ կ'ապրին, որով զուր
տեղը ժամանակ կը կորուսի եւ անօգուտ սեղն ալ սնուց:

Թխտուելու պէտք է գրուին կործր եւ կ'դեւենին
կանոնաւոր երես ունեցող հաւկիթները:

Նախասաղմի կազմութեան համար օգը էական տարր մը
ըլլալով, պէտք է մէկդի թողուլ կեղեւին վրայ կոծիծներ
ունեցող հաւկիթները, նոյն իսկ եթէ խոշոր ալ ըլլան:
Դարձեալ պէտք չէ առնել այն հաւկիթները, որոնց վրայ
բոյնին մէջ, սերիչ հաւ մը նստած է:

Թուխտին ներքեւ գրուելու են, գրեթէ միաժամանակ
ածուած հաւկիթները, որովհետեւ ամենէն թաքմերէն զուրս
կ'ըլլեն առաջին ձագերը, այնպէս որ, եթէ հաւկիթներէն

ումանք հին ըլլան առաջին եւ վերջին ելլողներու մէջ մեծ ժամանակամիջոց մը պիտի սահի :

Անտարակոյս , աւելի աղէկ է թխսել տալ ամենէն թարմ հաւկիթները , բայց եթէ չի գտնուի ասոնցմէ , աներկիւղ կարելի է 15-20 օրուան հաւկիթներն ալ գործածել , բաւ է որ պահուած ըլլան միօրինակ եւ ցուրտ բարեխառնութիւն ունեցող անկ մը եւ շատ երեքցուած չըլլան :

Մեր բոլոր այս ըսածները կը յարմարին թխող հաւերու , որովհետեւ արուետապան թխարանի համար տարբեր պայմաններով կ'ընտրեն հաւկիթները :

ՄՇԱԿԱԿԱՆ

Ծ Խ Ա Խ Ո Տ

(Շար. եւ վերջ)

Մէկ հէկտար հողի վրայ կը տնկուի , տաք երկիրներու մէջ 10,000 ծխատունկ , բարեխառն երկիրներու մէջ 40,000-50,000 : Տնկելէ հաջորդ շատ լաւ հսկել պէտք է , ամենամեծ մաքրութիւնը անհրաժեշտ է , որը կը ստացուի երեք անգամ կրկնարօրելով (չափա) եւ վերջին անգամը հողապատելով բոյսերու ոտքը : Ծխախոտի մշակութեան կարեւոր մասը տերեւներու լայնութիւնն ու ծաւալն է , ուրեմն պէտք է կեղբոնացնել բոյսի բոլոր հիւզը տերեւներուն մէջ , այդ կը ստացուի ծխատունկը ծայրասելով :

Ծայրատունկը գործողութիւն մ'է , որ կը կայանայ ցողունի գագաթը կարելուն մէջ , իւրաքանչիւր ծխատունկի ոյժին նաւելով շատ կամ քիչ տերեւ կը ձգուի վրան , օրինակի համար տկարներուն քիչ եւ ուժովներուն շատ թուով տերեւներ , որպէսզի հիւզը կարողանայ սնուցանել պանոնք :

Չոր ծխախոտը , պարսիկպանութեան մէջ կը գործածուի իրեւ միջատասպան , ասոր հակառակ կանադն ալ կ'ուտուի իսկ մը միջատներէ եւ մակարուծերէ :

Միատունկը ենթակայ է ամենէն շատ ժանկի , քըր-
տին, քխաշի , սպիտակութեան եւ դեղնութեան հիւան-
դութեանց :

Միախոտի բերքը կը քաղուի նայելով կլիմային ,
ընդհանրապէս օգոստոսի վերջերը եւ սեպտեմբերի սկիզբ-
ները : Մմենէ առաջ ներքեւի տերեւները կը քաղուին եւ
զատ կը դրուին , որովհետեւ երրորդ կարգի ծխախոտը կը
կազմեն : Մէջտեղի տերեւները ժամանակ մը ետքը կը
քաղուին եւ կը կազմեն երկրորդ կարգինը , վերջապէս
վերի մասերունը , որոնք էն վերջը կը հասնին եւ առա-
ջին կարգի ծխախոտը կը կազմեն :

Յարմար ժամանակին պէտք է քաղել ծխախոտը , եթէ
կանուխ քաղուի , ծանրութենէն կը կորսնցուի , ուշ քաղ-
ուելով ալ կը կորսնցնէ համն ու հոտը , ծանրութիւնը կը
պակսի եւ կրնայ մինչեւ անգամ վտանգուիլ կանխահաս
ցուրտերէ :

Միախոտի հասունցած ըլլալը կը ճանչցուի շատ մը
նշաններով , տերեւները կը դեղնոտին , կը ստանան մա-
զազաթային կազմութիւն մը , կը փոթոտին , իրենց ծայ-
րերը կը ծռին դէպի հողը եւ սպտիկ հոտ մը կը բուրեն :
Շատ տեղեր ալ ապահովուելու համար հասունութենէն , կը
կտրեն ծխատունկի ցողունը , եթէ կտրուածքին վրայ
տեսնեն կարմրուկ շրջանակ մը՝ կը սկսին քաղելը : Տե-
րեւները , կը քաղուին մատներով , կարելի եղածին չափ
ցողունին մօտէն կտրելով տերեւի կոթը եւ ազուօր օդին
ցողերու , շաղերու բոլորովին վերնալէն ետքը :

Տաք երկիրներու մէջ ծխատունկը արմատի մօտէն կը
կտրեն սուր գործիքով մը եւ վարի կողմը արեւին կը դար-
ձնեն եւ կը թողուն արախն երեսը . հոս կը սպասեն , կը
կախուղնան տերեւները մինչեւ որ չորցուելիք տեղը փո-
խադրուին եւ կախուին իւրաքանչիւրը գլուխնին վար
դարձուած : Չորցուելիք տեղին մէջ տերեւները կը կոր-
սնցնեն իրենց պարունակած ջուրի մեծագոյն մասը : Շու-
տով չորցուած ծխախոտը կտրատուող , պատտաւուող կ'ըլլայ ,
կը կորսնցնէ ծանրութիւնը , կանանչ կը մնայ եւ արժէքը
բնականէ պակաս կ'ըլլայ : Ուշ եւ դանդաղ չորցուածներն ալ
կը մքլին եւ մինչեւ անգամ կը փտտին : Շուքին մէջ պէտք
է չորցնել եւ չորցուելիք ակզի օդը կանոնաւորաբար փո-
խելով : Չորցուելիք տեղը պէտք է իզոխացած ըլլայ եւ

դէպի հարաւ նայի, ուրկէ փչած հովերը աւելի չոր քան խոնաւ են :

Միախտոր բաւականին չորնալէ վերջը, որ կը ճանչցուի կողերէն ստացած մութ գոյնէն, որոնք աւելի դժուար կը չորնան, կակուղութենէն եւ չի կոտրտելէն. տերեւները երեքի կը բաժնուին եւ կը կապուին, զուրս թողլով փճացածներն ու պատռածները : Իւրաքանչիւր ապոցը կը բաղկանայ 25-30 տերեւներէ : Բերքի քանակութիւնը կախում ունի հեկտարի մը վրայ անկուած ծըխատունկներու եւ անոնց վրայ գտնուած տերեւներու թիւէն :

Հարաւային երկիրներու մէջ, ուր հեկտարին վրայ 10,000 ծխատունկ կը տնկուի եւ ասոնց իւրաքանչիւրին վրայ ալ 9 տերեւ կը ձգուի, կը քաղեն հեկտարէն 600 քիլօ չոր ծխախոտ : Հիւսիսային երկիրներու մէջ հեկտարին 40,000 ծխատունկը 7-3 տերեւներով կ'արտադրէ 1800 քիլօ ծխախոտ : Ֆրանսա միջին հաշուով հեկտարէն կը քաղէ 1200 քիլօ ծխախոտ : Գ. Մ.

Եթէ մեր հարիւրաւոր բաժանորդները մեզ վճարած ըլլային ժամանակին, մենք ալ պիտի կրնայինք կանոնաւոր կերպով շարունակել. կը հաւատանք որ մեր յարատեւութիւնը պիտի ցրուէ բոլոր վարանմունքները եւ կասկածները, այնպէս որ՝ պիտի սկսինք «Գութան»ի Բ. շրջանի հրատարակութիւնը քիչ ատենէն եւ լաւագոյն պայմաններով :

Բ Ա Յ Ո Ւ Ա Մ Է

«Գ Ո Ւ Թ Ա Ն», ի

Բոյ ՇՐՋԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժնեգին եւ թղթակցութիւն ղրկել միեւնոյն հասցէով :

Մակօր. — Մեր Եւրոպայի եւ Ամերիկայի բաժանորդներու մեծամասնութիւն մը խորհուրդ կուտար մեզ փոսթի միջոցով գանձել մեր բաժնեգիները. յարգելով մեր պատ. բաժանորդներու այդ բաղձանքը՝ այսուհետեւ փոսթի միջոցով պիտի գանձենք «Գութան»ի բաժնեգները :

Le Gérant: PAUL GÉRÉE

Imprimerie B. MISSAC — 4, Rue Ortolan. PARIS

Charrues à Vapeur
Locomotives à Vapeur
Camions à Vapeur
Tomberaux Routières
Rouleaux des Routes à vapeur

Շոգեշարժ ստորներ

Պոդոսակերու շոգեշարժներ

Շոգեշարժ սայրակներ

Շոգեշարժ ցած սայրակներ

Պոդոսակերու շոգեշարժ լողեր

Dé construction parfaite et d'une solidité à toute épreuve,
sont livrés à des prix excessivement réduits par

John Fowler & Cie.

MAGDEBOURG

(Allemagne)

Փորձուած ամուրիութեամբ եւ ընտիր շէնքով, կը զրկուին ամենաաժան գներով Գերմանիոյ Մակտէպուրկի ԺՕՆ ՖՕՎԼԷՐ Ընկերութեան կողմէն:

ԳՈՒԹԱՆԸ

Պիտի շարունակենք հրատարակել ամեն զոհողութիւնով, ահաւասիկ 9 եւ 10րդ թիւերն ալ. քիչ ատենէն պիտի զրկենք 4րդ եւ 11րդ համարները, իսկ առաջին շրջանի վերջին թիւը՝ 12րդը՝ երկրորդ շրջանի առաջին համարին հետ:

«Գութան»ը այսուհետեւ կանոնաւոր կերպով եւ ժամանակին պիտի հրատարակուի, կը յուսանք, որ մեր պպ. գործակալներն ու բաժանորդներն ալ այս վերջին համարները առնելէ ետքը՝ պիտի բարեհաճին ապառիկ մնացած բաժնեգները զրկել մեզ, որով թէ՛ իրենց պարտքը վճարած պիտի ըլլան եւ թէ՛ մեզ դիւրութիւններ տուած՝ ձեռնարկելու համար հոգաբորժական ուրիշ օգտաւէտ հրատարակութիւններու:

Մենք պարտական էինք տալ՝ 12 թիւ «Գութան» մեր բաժանորդներուն՝ ՊԻՏԻ ՏԱՆԷ. ո՛չ ոք թող չի կասկածի մեր բարեկամեցողութեանը, երկաթէ կամքին եւ յարատեւութեանը վրայ, հակառակ մեզ շրջապատող դժուարութեանց, յաջողեցանք վերսկսիլ մեր գործը եւ հրատարակել 9 եւ 10րդ թիւերն ալ, այս բանը մեզ իրաւունք կուտայ յուսալու՝ որ մեր իւրաքանչիւր բաժանորդ պիտի մտածէ այսուհետեւ թէ՛ «Գութան»ի խմբագրու թիւերը, եթէ յաջողեցաւ մինչեւ 10րդ թիւը հրատարակել մնացածն ալ կրնայ տալ՝ գետն անցնողը առուին մէջ չի խղզուիր: